4068

1520

491.99-1
Ц-44

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԱՏԻՏԱԿԱՆ—ՄԱՐԴԱԲԵՆԵԱԿԱՆ

ԴՐԱԴԱՐԱՆ

Նուէր տ. Մարիամ Արամեանից՝ ի յիշատակ իւր հօր՝ բժ. Միսաք Արամեանի։

2010

2002

ԿՊ-0581
370

391.542-1
Ս-44

Աղուիս-Տարազի 1892 թ. X գլուխ

4068

Հ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՄԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

1003
Ա-411

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՆԲՒԵՐ

ԹԻՖԼԻՍ
Տպագրեաց Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

12173

Дозв. ценз. Тифлисъ 3-го октября 1892 года.

Тип. „АРОРЪ“, Т. Я. Назарьянъ, Барятин. ул.

ՄԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՆԸՆԴԵՐ

1

Ուսումնարանական տարին սկսելու է վրայ է արդէն, չուտով ուրեմն մեր ներկայ գրականութեան խայտաբղէտ ուղղագրութիւնը կարող է ձեր ժողովներում վիճելի նիւթ դառնալ։ Կամենալով դէթ խորհրդով ձայնակից լինել ձեզ՝ չտապում եմ ահա այդ նիւթի մասին իմ բոլոր գրածների գլխաւոր մտքերը ամփոփել սոյն յօդուածիս մէջ։

Զըմոռանանք, յարգելի ընկերակիցներ, որ մենք կոչուած ենք ազիտութեան դէմ պատերազմելու, կոչուած ենք խաւարը և մթութիւնը փարատելու գիտութեան լուսով։ Որքան մեծ է մեր կոչումը, ինչ սքանչելի առաքելութիւն է, բայց և որքան մեծ պատասխանատուութիւն կայ մեզ վրայ՝ մեր կրթած սերունդի առջև։ Ի՞նչ պիտի լինի մեր նը-չանաբանը, եթէ ոչ մեր անընդհատ և տոկուն աշ-

խատութեամբ դիմելը դէպի կատարելութիւնը և Կատարեալը։

Ամենայն հիմք, որ հաստատուած չէ կատարելութեան վրայ, նա խախուտ է և կործանելու ենթակայ։ Ուղղագրութիւնն էլ, եթէ լինի մի անհատի քմահաճութեան արդասիք, զուրկ լեզուական օրէնքներից, նա ևս կը խախտի և տեղի կը տայ աւելի օրինաւորին և Կատարեալին։

Մի բան կատարելագործելու համար պէտք է նախ լաւ ճանաչել նրա անկատարութիւնը, նրա պակասաւոր կողմերը։ Հմուտ երկրագործը հետազօտում է իր հողի յատկութիւնը և յետոյ տալիս է նրան այն, ինչ որ պակաս է, և խլում, ինչ որ աւելորդ է։ Այսպէս ենք զարգանում և կրթւում մենք ինքներս, երբ միտք ենք դարձնում մեր ինքնակրթութեան վրայ,—սովորում ենք, ինչ որ հարկաւոր ենք համարում գիտենալ, և դուրս մղում մեր գրքից, ինչ որ վնասակար և անօգուտ ենք համարում։ Ձեռք ենք վերցնում սուտից, մոլորութիւնից, նախապաշարմունքից, մոլութիւնից և ձեռք բերում ճշմարիտը, ստոյգը, բարին և օգտակարը։

Այսպէս է մշակւում և կատարելագործւում ամենայն ինչ, որ զարգանալու ենթակայ է, որ կենսունակ է և աճելու յատկութիւն ունի։ Ամենայն ծնունդ—լինի նա հողի, արդանդի, մտքի և երևակայութեան, սկզբումը միշտ անկատար է,—մանուկ է, խամ է, մատաղ է։ Նա պիտի աճի, եթէ մի բոյս է. պիտի զարգանայ, եթէ մի մանուկ է. պիտի կատարելագործուի, եթէ մի արուեստ է կամ գործիք. պիտի ստուգուի և ճշմարտուի, եթէ մի ենթադրութիւն է։ Այսպէս է բնութեան անփոփոխ օրէնքը, որ իր ազդեցութիւնն անխափան տարածում է ստեղծագործութեան բոլոր հիւլէների վրայ։

Գիտակցութեան հասած ազգերը օգտւում են բնութեան այս օրէնքից և կատարելութեան գործը հեշտացնում և արագացնում են։ Ինչ որ անգիտակից ժողովրդի մէջ կատարւում է անհուն դարերի ընթացքում, գիտակցութեան հասած ժողովուրդը նոյնը կատարում է մի քանի տարուայ մէջ։ Ուրեմն աջակից լինինք միմեանց և միասին հերկենք մեր մտաւոր և բարոյական խամ ու խոպան անդաստանը, հետազօտելով նրան, խլելով նրանից փուչն ու տատասկը, քարն ու քոլը և տալով բարուրող նիւթեր, որպէս զի մեր ցանած սերմերը միոյն վաթսուն ու հարիւր տան։

2

Երբ մի խոր հայեացք ենք ձգում մեր գրքերի դիւտի և նրանց զարգացման պատմութեան

վրայ, տեսնում ենք, որ սկզբումն այս գրերն այնքան անկատար են եղել, որ Մեսրոպն ստիպվել է գիւղէ գիւղ և քաղաքէ քաղաք ընկնել նրանց կատարելութեան հնարը գտնելու համար։ Նոյն իսկ պատմութիւնն ինքը, որ այս մասին տեղեկութիւն է թողել յետնորդներիս համար, այնքան անկատար է, որ մենք նրանից ոչինչ կատարեալ բան չենք հասկանում։ Թէ ինչումն էր անկատարութիւնը, քանի՞ գիր ունէին առաջ և որոնք էին, յետոյ քանի՞սը գտնուեցան և որոնք, այս մասին մեզ ոչինչ չի ասում պատմութիւնը։ Այսպէս ասա՛ մեր գրականութեան սկիզբը, նրա ուղղագրութիւնը և բառագրութեան ձևը մեզ համար մթութեան քողով ծածկուած են։ Սկսած հինգերորդ դարուց մինչև իններորդ դարը—չորս հարիւր տարուայ ընթացքում ձեռագրուած մատեաններից ոչ մէկը մեզ չի հասել։ Զարմանալին այս է, որ արձանագրութեան հետք էլ չի մնացել այդ ժամանակից։ Բայց ես մի հրաշալի արձանագրութիւն տեսայ Երուսաղէմ Ջիթենեաց լեռան վրայ։ Այնտեղ՝ ռուսաց եկեղեցու հիմքը փորելիս մի քանի տարի առաջ, գետնի տակից երևացել է մի մօզայիկազարդ գերեզման անեղծ և անարատ։ Վրան գրուած է մեսրոպեան տառերով՝ „Այս դիր Ի Զուշանկայ մուրն Արտաւանայ Հոռի ժ“։ Սրա վրայ ռուսները մատուռ են շինել և պահպանում են ա-

ռանձին խնամքով։ Երուսաղէմի հանդուցեալ պատրիարք Եսային էլ նոյն գերեզմանի պատկերը խականի մեծութեամբ և զարդարանքով նկարել է տրուել և կախել պատրիարքարանումը։ Նոյն գերեզմանից մի քանի քայլ հեռու դէպի արևելք դարձեալ գետնի տակ երևացել են երկու կարգ գերեզմաններ հայ իշխանների ու տիկինների։ Սրանցից երկուսն են և՛ նշանաւոր և՛ զարմանալի։ Մէկի վրայ գրած է եղել Զուշանիկ, իսկ միւսին՝ Ջոջիկ։ Միմի բառ միայն, բայց շատ բան պարունակող։ Ջոջիկը վրաց Վաղդէնի եղբայրն է՝ Շուշանիկի տաղը, իսկ Շուշանիկն էլ մեր Շուշանիկն է, ամենից սիրելին, Վարդանի դուստրը, որի մասին մենք կարծում էինք, թէ Թիֆլիսի Մատենի բերդումն է ամփոփուած։

Մեզ համար՝ ներկայ նիւթի վերաբերութեամբ հետաքրքրականն աւելի Արտաւանայ մօր տապանագիրն է։ Այս դամբարանը, որ հնումն սաւում էր դիր, երկու բանով է նշանաւոր, մէկ որ թուական չունի, երկրորդ որ՝ Ի գրի տեղ գրած է Ը։ Կարելի է ուրեմն առանց սխալուելու ենթադրել, որ դա գրուած է այն ժամանակ, երբ մենք թուական գործածելու սովորութիւն չենք ունեցել, իսկ Հայոց թուականը դեռ չի եղել հնարուած և կամ եթէ հնարուած է եղել, բայց դեռ ես ամենն տեղ չի եղել գործածա-

կան։ Ուրեմն սա պէտք է լինի վեցերորդ դարի երկրորդ կիսի գործ, և հէնց այդ ժամանակ էլ մենք ունեցել ենք յունաց բանակում ծառայող իբրև զօրապետ մի նշանաւոր հայ իշխան՝ Արտաւան անունով։ Իսկ Ի գրի չբլինելը և դրա տեղ եչի բաղմելը, ցոյց է տալիս, որ Ի գիրը Մեսրոպից շատ յետոյ է մտած։ Մի քանի տարի առաջ ես ասել և հրատարակել եմ թէ „Աղբիւրում“ և թէ „Մուրճում“, որ Ի գիրը մեսրոպական չէ, այլ վերջնամուտ։ Ինձանից յետոյ էլ մի հայագէտ անգլիացի մօտաւորապէս մի և նոյն կարծիքը յայտնեց Էջմիածնի ձեռագրերն աչքի անցնելով։ Երկար կըլինի պատմելը, թէ ես ինքս ինչպէս հասայ այդ եզրակացութեանը, առանց ձեռագրեր ուսումնասիրելու. այսքան միայն կարող եմ ասել, թէ միտք յղացայ մերի այբբենարանից որոշել բուն հայկական գրերը, որոնք կարող չէին փոխ առնուիլ ոչ պարսկից, ոչ ասորուց և ոչ յոյնից և դայ, որ այդ գրերն են ը, ո, ծ, ձ, ճ, ռ, ց։ Մի կարգ գրեր էլ, որոնք թէ հայկական էին և թէ ասորա-պարսկական, մի կողմ ձգեցի, և մնացորդ սա-ոցայ չորս գիր—է, վ, ի, յ։ Սրանից յետոյ միտ դարձնելով մեր բաղմահնչիւն գրերի վրայ, ինչպիսիք են ա+ւ, որ թէ աւ էր, թէ օ, և թէ ով, յետոյ ե+ւ, որ թէ եւ է, թէ ю, և թէ եօ, վերջապէս ո+յ, որ թէ ոյ էր, թէ օյ և թէ օ։ Ուշադրութեան

առնելով նաև միատառ ու և օ չունենալը, ես այս բոլորից յետոյ այն եզրակացութեան եկայ, որ հաշմարիտ է պատմութեան մէջ ասածը՝ թէ Մեսրոպը յունական գրերից օգուտ քաղած չէ։ Բայց այդ է, ի, յ, վ գրերը յունական ծագումն ունին. երբ և ոմ մտցրեց դրանց մեր գրերի մէջ։ Այս հարցի լուծումն ահա ինձ համար մի հոգեկան պահանջ դառաւ, սկսեցի ուսումնասիրել այդ գրերը և գտայ, որ Ի գիրը մտել է մեր մատենագրութեան մէջ այն ժամանակ, երբ արդէն մենք կազմակերպած գրականութիւն ենք ունեցել, և սկսել է մրցել եչ գրի հետ. չկարողանալով նրան դուրս մղել բառերի սկզբից, վերջերից դուրս է մղել իսպառ, իսկ բառամէջերում խառնուել նրա հետ։

Այս է-ի և եչ-ի մրցումը մասամբ նման է ո և օ գրերի մրցման։ Օն էլ աւ երկտառը դուրս մղելով՝ սկսել է պատերազմել ոյի հետ, բայց այս պատերազմում ո գիրը յաղթել է օ-ին, դուրս մղելով նրան բայերի օղ վերջաւորութիւնից և ուրիշ շատ տեղերից։ Երբ ինձ համար պարզուեց, որ է գիրը վերջնամուտ է, այնուհետև սկսեցի ուսումնասիրել վերը, որ տեսնեմ ինչ ձայնական տարբերութիւն ունի դա ւինի համեմատութեամբ։ Սրա վրայ էլ կանգ առնենք այժմ, որովհետև ներկայումս ուղղագրութեան մէջ եղած վէճը այս երկու գրի մասին է։

Այս խնդիրը պէտք է այնպէս պարզել, որ այլ ևս վիճելու առիթ չըմնայ գոնէ նրանց կողմից, որոնք ճշմարտութիւնը լսելուց յետոյ համոզելու տրամադրութիւն ունին և ոչ այն հոգիների համար, որոնք լոյսից և ճշմարտից այնպէս են վախչում, ինչպէս մահից։

3

Հետևեալ ձայները — ա, ե, ը, ի կարող ենք կարդալ և գրել ինչպէս ձախից աջ, նոյնպէս և աջից ձախ, ինչպէս՝

ա, ե, ը, ի

աւ, եւ, ըւ, իւ

Սրա համար՝ իբրև օրինակ և ապացոյց՝ բառեր բերելն աւելորդ եմ համարում։ Դուք արդէն գիտէք, որ վերջն տառը եւ, ե, ի, ը ձայնաւորների սկզբումն էլ է գրւում, վերջումն էլ, և այդպիսի տեղերում վերը գործ չունի։ Բայց մենք ուրիշ չորս ձայնաւոր էլ ունինք, ինչպէս՝ ո, օ, ու, է, որոնց սկզբումը գրւում է ւիւն, բայց վերջումը՝ ոչ։ Օրինակ՝

ւո, ւօ, ւու, ւէ

ВО, ВО, ВУ, ВЭ

ո+ւ, օ+ւ, ու+ւ, է+ւ

У, ОВ, УВ, ЭВ,

Բացատրենք այս աղիւսակը։

Գրում ենք ւո, ինչպէս՝ աւոր, եւոր, և այլն. ուր ւո ձայնն է ВО, ուրեմն և դրա հակադարձը պէտք է լինի ОВ, բայց յայտնի է արդէն, որ մեզանում մի այլ երկատառ կամ մնատառ ու չըլինելով, ոյից յետոյ ւ են գրել և չինել ո+ւ=У, որ մի պայմանական, այլ ոչ հնչական գիր է. իսկ ОВ կարդալու համար սկզբում գրել են ա+ւ, իսկ յետոյ այդ ձևն անյարմար գտնելով, գրել են ով։

Մի թէ պարզապէս չի երևում, որ եթէ մեր նախնիք ունեցային մի ձայնական, այլ ոչ պայմանական ու, այն ժամանակ ո+ւ կըլինէր ոչ թէ ու, այլ ով կամ ով, նայած թէ ո գիրն ինչպէս են արտասանել։ Այստեղից ուղիղ տրամաբանութեամբ հետևում է, որ՝ եթէ ւո ձայնի հակադարձն է ով, իսկ ով ձայնի էլ հակադարձն է ւո (որովհետև չունինք և չենք գրում վո, այլ միայն ով+ո) ապա ուրեմն ւ և վ մի և նոյն ձայնն ունին։ Մեր հայկաբաններից միմիայն Հ. Ա. Բագրատունին է նկատել, որ ոյից յետոյ եղած վերը ւիւնի փոխանակ է է գրւած, ըստ որում եթէ ւիւն դնէին՝ ու կըդառնար։ Զարմանալի չէ, որ մեր ժամանակակից հայկաբանները, որոնք միշտ իրանց ձեռքի տակ ունին յիշեալ քերականութիւնը, չըգիտեն, որ նրանում այսպէս բան կայ ասւած։ Այս շատ բնական է.

մարդիկ սովորաբար այն են տեսնում, ինչ որ փնտրում, ինչի մասին որ մտածում են։ Ես ինքս այդ բանը նկատեցի այն ժամանակ, երբ արդէն ինքս ասել էի և ասածս հաստատելու համար գրաւոր ապացոյցներ էի որոնում։

Այժմ բացատրենք ւо ձայնը։

Գրում ենք ւо, ինչպէս՝ առաւօտ բառի մէջ, որ է դարձեալ во, բայց չենք գրում և ընդհակադարձն о+ւ, որ է ов, այլ գրում ենք դարձեալ ո+վ=ов։ Ի՞նչ է սրա պատճառը։ Ամենից յայտնի է, որ о գիրը նորամուտ է։ Առաջ գրում էին ա+ւ, որ թէ աւ էր կարդացւում, թէ о և թէ ով, նայած բառի նշանակութեանը։ Եթէ այդ գիրը Մեսրոպն ունեցած լինէր, մենք այլ ևս չէինք ունենալ ով, այլ՝ оւ։ Եթէ ав, ев, ив, կարդալու համար գրել են աւ, եւ, իւ, ապա ов կարդալու համար էլ կը գրէին оւ և ոչ ով։

Այստեղից էլ ահա պարզ երևում է մէկ կողմից մեր գրերի և բառագրութեան ձևի պարզականն անկատարութիւնը, միւս կողմից և այն բացարձակ ճշմարտութիւնը, որ ւիւն և վեւ գրերի մէջ հնչական տարբերութիւն չի եղել երբէք, այլ դրանք ի սկզբանէ անտի եղել են նոյնահնչիւն գրեր։

Բացատրենք ւու ձայնը։

Գրում ենք ւու, ինչպէս՝ աւուր, դեղնաւուն և

այլն։ բայց չենք գրում և ընդ հակադարձն՝ ու+ւ=ուվ=ув։ Ինչու՞ չենք գրում։ արդեօք այդպիսի ձայն չը կայ մեր լեզուումը, թէ կայ, բայց գրելու սովորութիւն չի եղել։ Ոմանք իմ հակառակորդներից, թէ՛ միամտութեամբ և թէ՛ չարութեամբ, գրեցին, թէ այդպիսի ձայն մեր լեզուումը չը կայ, եթէ լինէր, ինչու՞ չէին գրել։ Իսկ ես ասել եմ և պնդում եմ, որ ու ձայնաւորից յետոյ սովորութիւն չենք ունեցած գրելու ոչ ւ, ոչ վ և ոչ էլ յ, եթէ ոչ՝ կը գրէինք ասույս, դույս, նույս, ույր, ույց, սուվին, դուվին, դուվնոյ, նուվոյ, ընդհակառակն այդ բառերը գրել են— ասյն, դոյն, նոյն, ոյր, ոյց, սուին, դուին, դունոյ և նուոյ։ Այս կարգի բառերը երբէք ուղիղ կարդալ չենք կարող, մինչև չիմանանք նրանց նշանակութիւնը։ «Նոյն» բառն ինչպէս կարող ենք կարդալ ուղիղ, մինչև չիմանանք թէ արդեօք դա մի դերանուն է, թէ յայտնի նահապետի անուն, որի վերջում եղած ն տառը մի որոշիչ յօդ է։ Ասել է թէ՝ ув ձայնն ունեցել ենք, ինչպէս և ույ, ույ, բայց այդպէս գրելու սովորութիւն չենք ունեցել, այլ գրել ենք միայն ո+յ, և՝ բառի նշանակութիւնն իմանալով՝ ուղիղ կարդացել, իսկ չիմանալով՝ սխալ կարդացել։ Ճշմարիտ է, ուղիղ կարդալու համար կայ և կանոն, բայց այդ կանոնը միայն կիսով չափ է օգնում, մանաւանդ երբ այդ ձայնից յետոյ եղած բա-

դաձայնը մի որոշիչ յօդ է կամ բառն օտար է։ Պատահում է նոյնպէս, որ սխալ կարդալուց յառաջ է գալիս այնպիսի ազեղութիւն, որ վարժապետը կարմրում է լսելիս։

Հիմա դանք թեաբանական օրէնքով ապացուցանելու, որ թէպէտ նախնիք գրել են ուա, ուե, ուէ, ուի, ուու, ուօ, բայց կարդացել են ուվա, ուվե, ուվէ, ուվի, ուվու, ուվօ։

Այս կարգի բառերում ու ձայնաւորը տողադարձի ժամանակ նոյն իսկ մեր նախնիք չինել են ը, այսպէս են վարել և չարականներում, փոխանակ գրելու ու—վա, գրել են՝ ը—ա։ Օրինակ այսպէս—ասաը—ւած, աը—ւութիւն, նը—ւէր, զը—ւարթ, նը—ւիրել և այլն։

Թէ մեր ու և ի ձայնաւորները բառի փոփոխուած ձևերում դառնում են ը, այդ արդէն յայտնի է ամենին, ինչպէս՝ սուրբ, սըրբոց, սիրտ, սըրտի և այլն։ Թող նուէր, նուազ, բառերում ևս ու ձայնաւորը դառնայ ը, դրա դէմ բան չունինք, բայց, այս ասացէք, թէ որտեղից է լոյս ընկնում ւ գիրը, քանի որ բառի անփոփոխ ձևում դա գրուած չէ։ Եթէ նուէր բառն է նու—էր, առաջին ու ձայնաւորը ը վերածելով՝ կըստանայինք նը—էր և ոչ նը—ւէր։ Ինչու է այսպէս։ Ո՞րն է ուրեմն ուղիղը, նուվէր, թէ նուէր, ի հարկէ, ուղիղ չէ նուէր, որ երբ ու ձայնաւորը առաջին վանկում չինում ենք ը, երկրորդ վանկը (վէր) մնում է անփոփոխ, ինչպէս նու—վէր, նը—վէր, բայց չեն գրել նըւէր, այլ նը—ւէր։ Ուրեմն ըստ արտասանութեան և ըստ ստուգաբանութեան այդ կարգի բառերը եղել են նու—ւէր, նու—ւազ, նու—ւաստ, Նու—ւարդ, նու—ւագ, զու—ւարթ։ Այս բառերի մէջ հայոց լեզուի օրէնքով ու ձայնաւորը դառել է ը, և ուրիշ ոչինչ։ Եզրակացութիւն.—ուվ ձայնը մենք ունեցել ենք, բայց գրելու սովորութիւն չենք ունեցել։ Մինչև այսօր էլ մեր կենդանի բարբառներում ամեն ոք կարող է իր ականջով լսել տու—ւաւ և տը—ւաւ, տու—ւեց և տը—ւեց, քու—ւոր և քը—ւոր։ Ուրիշ կերպ էլ կարելի չէ և անհնարին է, որովհետև մեր լեզուի մի նշանաւոր առանձնայատկութիւնն էլ այն է, որ երկու ձայնաւոր միմեանց չեն կպչում առանց ձայնակապի, իսկ այդ ձայնակապի պաշտօնը մեր բառագրութեան մէջ կատարել են ւ ու յ գրերը։ Այս կանոնը չեն պահպանել ի, է, ու ձայնաւորներից յետոյ։ Գրել են ա+յ+ի=այի, բայց ոչ՝ է+յ+ի=էյի, այլ՝ էի, թէպէտև կարդացել և այժմ էլ կարդում ենք էյի, գրում ենք իա և կարդում իյա։ Ռուսները գրում են iя, իսկ մենք իա, մինչդեռ պիտի իյա կամ իեա։ Մենք չենք գրում Սա—ուղ, ինչպէս օտարները, այլ Սա+ւ+ուղ, ուր ւ գիրը մի ձայնա-

կալ է միայն և գրված է հայ լեզվի արտասանութեան համեմատ։ Այսպէս էլ Փարա+ւ+օն, Եսա+յ+ի, և այլ բազմաթիւ բառեր։ Այս ձայնակապի պաշտօնը ո գրից յետոյ ւ գրի փոխարէն կատարել է վ գիրը, ինչպէս՝ Տրո+վ+ադա, որ է Տրո—ադա, պո—վ—էտ, որ է պո—էտ և այլ բառեր։ Այստեղից երկրորդ եզրակացութիւն։ Ձայնակապի պաշտօնը ւ գիրն է կատարել, բայց ո գրից յետոյ՝ վ։ Աչկարա ապացոյց, որ այդ երկու գրերը նոյնանշիւն են։

Հիմա խնդիր է, թէ այն կարգի բառերում, ուր ու ձայնը դառնում է ը, պէտք է սղել, թէ ոչ։ Իմ պատասխանն է պէտք է սղել և չըսղել, նայած թէ որպիսի բառ է, ծանօթ, թէ անծանօթ, կամ քիչ ծանօթ, մեծերի համար է գրուած, թէ փոքրերի և ժողովրդի. երկու կերպ է կարդացուում առանց ը գրի, թէ մէկ կերպ։ Օրինակ՝ մօտերս շատ գրւեց թէատներ բառը. ես ինքս առաջին անգամ կարդացի театнеръ և ոչ թէյատը—ներ։ Հայոց լեզվի վանական օրէնքով՝ սխալ է թէյատներ գրելը, պէտք է գրել թայատրներ, այսպէս և գրատրներ և ոչ գրատներ, որ է гратнеръ։ Պէտք չէ սղել և նոյ ասուած գրերից յետոյ, որովհետև այդ գրերը, մանաւանդ ն և ը տառերը իրանց յաջորդ տառի հետ ձուլելու, միամալու յատկութիւն ունին։ Օրինակ,

Հ.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
17/I 1982
ԱՄՐԱՆ ՄԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

երբ որ ուզում ես, որ քննիչցողդ կարդայ սարը՝ չըպէտք է գրես սարդ, որ է сард, որ մի միջատ է և ոչ սար, այսպէս և գիտդ չի լինիլ ասելդ, այլ տանջանքի օդ։ (Այս մասին ես աւելի ընդարձակ գրել եմ իմ „Վեց օրինակելի դաս վարժարանների համար“ տետրակում։ Ցանկացողները կարող են ձրի ստանալ։)

Բացի յիշեալ անյարմարութիւնից՝ ը գրի սղումը ամեն բանից անխիղճ, շատերի աչքում խորթ է թւում, մանաւանդ նրանց, որոնք այդպիսի տեղերում տեսել են ու գրուած։ Ամենքն էլ տեսել են գրուած „նուէր“ և „նըւէր“, բայց ոչ „նւէր“։ Այսպիսի բառերում փոքրերի համար ը գիրը չըպէտք է սղել։ Բայց այնպիսի բառերում, ուր ը գիրը վանկ չի կազմում, այնտեղերում ւ գիրը պէտք է միայնակ մնայ, ինչպէս յօդուած, գրուած, թըչուառ, ըստուէր։ Աստուած բառն ևս այս կարգիցն է։ Եւ այդ բառը իմ դասագրքերում չեմ գրել Աստուած, այլ Աստուած։ Այս հակասութիւնը ես արել եմ գիտութեամբ, ճարահատեալ, լաւ իմանալով, որ խաւարամիտ անձինք բառն ու նրան տուած դաղափարը միմեանցից չեն զանազանում։ Թուրքերը թուղթը սուրբ են համարում և չեն կեղտոտում, ասելով՝ Ղուրանը թղթի վրայ է գրուած։ Ապացոյց ասածիս, որ հիմա էլ, չընայած, որ այդ բառը թողել եմ ան-

փոփոխ, չատերն իմ չարախնդաց հակառակորդներից թէ խօսքով և թէ գրաւոր գոչում են, թէ ինչպէս կարելի է թոյլ տալ մի դասագիրք, ուր Աստուած բառը տպւած է Աստուած։ Մէկ հարցնող լինի դրանց, թէ ո՞րտեղ է տպւած, և ո՞ր երեսում, կամ ցոյց տւէք, և կամ ամաչեցէք ձեր զրպարտութեան և ստախօսութեան համար։ Իսկ ես ցոյց կը տամ, որ ինձանից չատ դարեր առաջ գրել են Աստուած և ոչ Աստուած։ Էջմիածնում ես գտայ Խորենացու պատմութիւնը՝ մի ընտիր գրչագիր, ընտիր մագաղաթի վրայ, որ պատկանում է Ս. Եպ. Գասպարեանին, բայց ես տեսայ պ. Կ. Կոստանեանի մօտ, և ուզածս փնտրելու համար, սկսեցի թերթել և գտնել ամենայն տեղ՝ առանց բացառութեան՝ գրւած Աստուած, աստուածային, աստուածայնոց։ Էլ չեմ ասում, որ Էջմիածնի մատենադարանում անթիւ գրչագրեր կան, որոնց մէջ ու գրի տեղ միւը միայնակ է գործածւած, որով ստուգւում է մեր բազմահմուտ Բագրատունու ասածը, թէ «Միայնակ պիտառութիւն ե գրոյդ խափանեալ է «առ յետնովք նե առ մեաք»։ Ի՞նչ է ասում այս։ Յետին ժամանակներումս են խափանել, ասում է, միւի մենակ գործածելը և մեր ժամանակ։ Այս ասել է, որ Մխիթարեանները նոյնպէս մասնակցութիւն են ունեցել ե գրի տեղ ռ գրելումը։

4

Մինչև այստեղ մենք ուզեցանք ցոյց տալ որ վ և ե հաւասարազօր և հաւասարաձայն գրեր են—մէկը հաստ չէ և միւսը բարակ, մէկը ձայնաւոր չէ և միւսը բաղաձայն, ինչպէս մինչև այսօր կարծել են մեր բոլոր դպիրներն ու դպրութեան ծառայողները։ Հիմա գանք դրանց նոյնահընչունութեան պատմութիւնն անենք։

Եթէ մեր հանճարաւոր Մեսրոպը իր ձեռքի տակ ունենար մեր այժմեան բոլոր 37 գրերը, նա այլ ևս բազմահնչիւն գրեր չէր ունի։ Այս այնքան ճշմարիտ է, որքան ճշմարիտ է այն, որ եթէ նախապատմական դարերում մարդիկ կացին ունենային, էլ քարով չէին կտրել իրանց մահակը։ Եւ մենք այսօր երբ գտնում ենք մի քարէ մուրճ կամ սուր, դրանից եզրակացնում ենք, որ նոր գործիքը գործածդրող մարդիկը երկաթ չեն ունեցել, ուրեմն և ոչ երկաթի գործիքներ։ Բազմահնչիւն գրերը հետեւանք են գրերի պակասորդութեան։ Լաւ ուսումնասիրելով մեր բազմահնչիւն գրերը, մեզ համար կը պարզւի բոլորովին, թէ որոնք էին պակասորդ գրերը և դրանցից որոնք են Մեսրոպեան, և որոնք վերջնամուտ։ Այսօր ամենքը գիտեն, որ առաջ ο չունենալու պատճառաւ գրում էին աւ, բայց չատ քչերը

գուցէ գիտենան, որ այդ աւը ոչ միայն և ավ էր և օ, այլև օվ։ Հայր Արսէն Բագրատունին՝ իր իսկ ասելով՝ հին և ստոյգ գրչագրերում գտնուում է գրուած—երաժաւին (ովին), բաւանդակ (բովանդակ), յաւազ (յովազ), Ղաւտ (Ղովտ), Նաբաւթ (Նաբովթ) իսկ գործիականներն անխտիր աւ, վոխանակ ովի, ինչպէս՝ բազմաւ, բերանաւք, ցաւաւք, ցորենաւ, գործաւք, մեծաւք և այլն, բայց չի գտնում ոչ մէկ տեղ, թէկուզ սխալմամբ գրուած, ուր տեղ ավ, օրինակ՝ ավր, ավրհնել, տավն (տօն), բերանավք, գոտեավ, և այլն (Տես. Քեր. երես 644)։

Հայր Արսէն Բագրատունին միևնոյն երեսումն ասում է. «Գրիգոր Մագիստրոսը այս բանից վրդովուած գանգատուում է, թէ ինչու մեր թարգմանիչները մի առանձին նշանագիր չըստեղծեցին, կամ գուցէ ստեղծել են, բայց կորել է»... Մագիստրոսի ժամանակ արդէն կար ով, ուրեմն նրա ուզածը պէտք է եղած լինի ոչ թէ ով, այլ օ, որ իրանից շատ յետոյ մտաւ։ Բայց քանի որ ով կար, ինչու դա չէր գրաւել իր բոլոր տեղերը բառագրութեան մէջ։

Ես այս երևոյթներից նկատելով՝ որ մեր վ գիրը վերջնամուտ է, որ Մեսրոպն ով գրած չէ, ինձ պէտք էր մի հիմնաւոր ու գրաւոր ապացոյց, որովհետև վերացական ըմբռնումից զուրկ մարդիկը բանն աչքով են ուզում տեսնել և ձեռքով չոչափել։ Ես չը

գտայ հնագոյն ձեռագիր, բայց միայն մի ակնարկութիւն գտայ Հայկազեան բառարանում վ տառի սկզբում։ Այնտեղ ասուած է, թէ այս տառը Թրակացու քերականութիւնից դուրս ձգեցին իբրև աւելորդ գիր, ասելով բաւական է մեզ ւ և ք գրերը, (առաջինը հայոց բառերի, իսկ երկրորդը յունականի համար)։

Ի՞նչ ասել է «քերականութիւնից դուրս ձգեցին»։ Քերականութիւնից դուրս ձգելով՝ եղած մատենագրութիւնից չէին կարող դուրս ձգել։ Եթէ այդ գիրը Մեսրոպինը լինէր, աստուածային միջամտութեամբ գտնուած և սրբացած, ով կը համարձակէր դուրս մղել։ Աշկարա երևում է, որ քերականութիւնը թարգմանելու ժամանակ, երբ ինչպէս յայտնի է, հայոց լեզուն յունաց լեզուի վրայ էին չափում ու ձևում, ուզեցել են մեր լիւնի բեռը թեթևացնելու համար, մի նոր վև մէջ բերել։ Եւ որովհետև այդ գործին մասնակցում էին խմբովին, շատերն ընդդիմացել են և չեն ընդունել, բայց վերջը մտել է գողդգող. հեղինակն իր անունը թաքցրել է, որպէսզի Մեսրոպի անունով որբանայ և ընդունելութիւն գտնի։ Ասացէք խնդրեմ, ինչ է թելադրում մեզ մեր ներքին ընբռնումը, մեր բընազդումը, վերջապէս ամենապարզ տրամաբանութիւնը։ Եթէ Մեսրոպը գրէր ով, ինչ հիման վրայ

նա չըպիտի գրէր և ով, եվ, իվ, էվ, ըվ, աւվ (օվ) և ուվ, որտեղ որ այդ ձայնները պէտք էին։ Էլ ինչու պէտք է գրէին հաւ, ցաւ, իմացաւ, կերաւ և այլն, և ոչ՝ հավ, ցավ, կերավ, իմացավ, և այլն։ Պարզապէս նրա համար, որ Մեսրոպի ժամանակ վև չըկար, նրա բառագրութեան ձևը սորապարսկական էր և ոչ թէ յունական, որ նրանից յետոյ մտաւ, սկսած իր կրտսեր աշակերտից՝ Մովսէսից, որ իր պատմութեան մէջ իր վարդապետների մասին ասում է աչկարայ, թէ „ԱՆՊԷՏՔ ԷԻՆ ՄԵՐՈՒՄ ԱՐԻԵՍՏԻ“...

Ցայտնի է պատմութիւնից, որ Մեսրոպը գրեր գտնելու միտքն ու գաղափարը յղացաւ Սիւնեաց աշխարհում, ուր անցկացրեց իր կեանքի մեծ մասը։ Այդ նահանգը կտրւած էր Արարատեան աշխարհից և ունէր իր անկախ բարբառը։ Մեսրոպն իր Մաշտոցն ու աւետարանը աւելի այդ բարբառի մօտիկ կըգրէր, քան մի այլ բարբառի, որովհետև այդ աշխարհն ամենից շատ պէտք ունէր քրիստոնէական լուսով լուսաւորւելու. այդտեղ էին բոյն դրել զանազան հին ու նոր աղանդներ, որոնց վերացնելու համար Մեսրոպն այնքան աշխատեց։ Եւ ինչ էք կարծում, այդ բարբառով գրելու համար այսօր էլ ով գրելու կարիք չըկայ և այդ բարբառում չըկայ ով այլ աւ և օ միայն։ Ունին ով հարցական, այլ

հու, հիւր (ոյր), չունին գործական ով, այլ առանց բացառութեան աւ—դռնաւ, դէպաւ, հացաւ, հօրաւ, մօրաւ. չունին ծով, կով, այլ՝ ծաւ, կաւ, խոտաւ, խաւած։ Նոր հիմա այդ ովը մտնում է քաղաքացոց և գրականութեան ազդեցութեամբ։

Սկզբումը, երբ վևը մտցրել են և գրել ով, այդ ձայնը գործ են ածել միայն չըփոխւած բառավերջերում, փոխանակ գրելու հին ձևով ծաւ, գրել են ծով, այսպէս և գով, սով, ժողով։ Իսկ գործականներից և բառամէջերից աւ երկտառը, ուր դա փոխանակ ովի է եղել գրւած, դեռ Գրիգոր Մագիստրոսի ժամանակ մնում էին հին ձեռագրերում։ Վևի վերջնամուտ լինելը երևում է և նրանից, որ ոչ մի վրիպակ չի գտնւում, որ, օրինակ աւ-ի և օ-ի տեղ գրւած լինի ով, մինչդեռ եթէ այդ երկուքը միասին սկզբից գոյութիւն ունենային, լինելով նոյնահնչիւն, նոյն չփոթութիւնը յառաջ կըբերէին հնագոյն ձեռագրերում, ինչ որ յառաջ են բերել յետին և նոր ձեռագրերում և մանաւանդ մեր հին ու նոր աշխարհիկ գրականութեան մէջ։

Պէտք չէ մոռանալ գիտնալու մի կարևոր հանգամանք ևս։ Երբ որ մի նոր գիր է հնարւում, նա իսկոյն և իսկ մի կախարդական զօրութեամբ չի մտնում բոլոր, արդէն ձեռագրւած մատեանների մէջ։ Նոր գիրը նոր յօրինւող և նոր արտագրւող

մատեանի մէջ կարող է մնալ, իսկ այդ բառագրութեան հին ձևը ձեռք չընդունած ձեռագրերի մէջ կըմնայ անփոփոխ։ Մեր ձեռքը հասած գրչագրերը ինչերորդ տարից դէնը չեն անցնում, դրանցից է օգուտ քաղել հայր Բագրատունին, բայց Մագիստրոսը կունենար անշուշտ աւելի հին ձեռագրեր, եթէ ոչ հինգերորդ, գոնէ եօթը և ութերորդ դարերում գրուած, որոնցում նա կարող էր տեսնել աւելի հին ձևի բառագրութիւններ, աւելի չփոթ ու աւելի դըժար վերծանելի, այլապէս չէր ասիլ, թէ „ընդէր թարգմանիչքն չստեղծին առանձինն նշանագիր, կամ թէ ստեղծեալ ու կորեաւ“։ Սակայն մի որ և է հին բառագրութիւն, որքան էլ որ նա փոփոխուի մի նորամուտ տառով, կարող է ազատուել և դարերի միջով անցնելով՝ գալ մինչև մեզ հասնել։ Այդ փախրստական բառը պէտք է այնպիսի բառ լինի, որի նշանակութիւնն ոչ ոք հասկացած չլինի, ոչ ոք խմացած չլինի, թէ այնտեղ պէտք է փոխել։ Պատահում է և նրա բոլորովին հակառակը, երբ ուզում են աւ երկտառի փոխանակ գրել օ, ամենայն աւ անխտիր չինում են օ։ Այս ևս պատահում է բառի արտաբերութիւնը չիմանալուց կամ բոլորովին անգրագէտ մարդու ձեռքով։ Մէկը կարող է նօտար լինել, գրչութեան արհեստն իմանալ, հայերէն մի մատեան արտագրել, ինքը ոչ հայ լինելով և ոչ

հայերէն գիտենալով։ Այսպիսի մի նօտարի եթէ պատուէր տաս արտագրելու մի աւետարան, և ասես, թէ աւ երկտառի տեղ կըգրես օ, ինչ ասել կուզի, որ նա բոլոր աւերը կըշինէ օ։ Հայր Բագրատունին բերում է և այսպիսի բառեր—ինչպէս՝ բօական, օետարան, արմօ (արմաւ), աղօնի (աղաւնի), ձայնօոր, Դօիթ, և այլն, որոնք յետին դարերի անհմուտ գրիչների արդիւնք են։

5

Ինչպէս տեսնում ենք, ուղղագրութեան մէջ միակերպութիւն ասածը ինչպէս չըկայ մեր նոր գրականութեան մէջ, նոյնպէս չըկար և հնի մէջ։ Հնի մէջ չըկայ նրա համար, որ այդ գրականութիւնը դեռ չըծաղկած՝ թառամեց, նա երբէք չունեցաւ իր ոսկեդարը, այլ ունեցաւ միշտ քարէ դար և այնպէս էլ քարացաւ, վրան բուսցնելով խոտ և մամուռ, իսկ նորը, ինչպէս տեսնում ենք, դեռ նա բարուրի մէջ է և կարօտ խելացի հոգատարութեան։

Մեզանում, սկսած միջին դարերից մինչև մեր օրերի սկիզբը, ամենայն ինչ հաւատալու վրայ էր հիմնուած և ոչ գիտակցութեան։ Զէինք երկմտում, որովհետև այդ կըլինէր մի տեսակ թերահաւա-

տութիւն. չէինք հետազօտում և վերլուծում թաքնուած ճշմարտութիւնը լոյս աշխարհ հանելու համար, որովհետև այդ կըլինէր հերետիկոսութիւն։ Ինչպէս մի անհեթեթ առասպել, որ իբրև սրբացած աւանդութիւն պահւում է ազգէտ ամբոխի մէջ և դարէցդար աւելի աղաւաղւում և անճոռնիանում մինչև դէն ձգելու չափ, այսպիսի մի պատկեր էր ներկայացնում և մեր գրականութիւնը նոյն իսկ այս դարի սկզբում, 19-րդ դարի, որ լուսաւորուած էր միայն Եւրոպացոց համար։ Մեր լեզուի դաստիարակները, նրա կրթողն և մշակողը մեն մենակ Մխիթարեանք էին, որոնք հակւած էին դէպի դրոց լեզուն, անուշադիր թողնելով կենդանի աշխարհիկ լեզուն, դրան համարելով մի աղաւաղմունք դրոց լեզուի և աւելի ևս աղաւաղում էին, երբ գրում էին այդ լեզուով, իբր դա չունենար ոչ մի կանոն և օրէնք, դա չունենար գրաբառից անկախ, նրանից անհամեմատ ուղիղ և կանոնաւոր քերականութիւն։ Մինչդեռ կենդանի լեզուները Եւրոպայում գլուխները բարձրացրած հսկայական քայլեր էին անում, մինչդեռ նոր լեզուագիտութիւնը ծաղկում և յառաջ էր գնում օրէցօր նորանոր մթութիւններ լուսաբանելով, Մխիթարեանք մեզ հաւատացնում էին, թէ՝ Ակռին է արկ-ուռի, Մարանդն է՝ մայր—անդ, որից և հետևցնում էին, թէ Նոյը հայերէն էր խօսում, ուրեմն Ադամն էլ

այդ լեզուով կըլինի խօսեցած։ Մենք էլ հաւատում էինք։ Սրանք էին ահա տալիս մեզ քերականութիւններ, որոնք Պապից առաւել անսխալական էին համարւում և հաւատւում քրիստոնէական վարդապետութիւն ըստ դաւանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, և հէնց չատ անգամ քրիստոնէական վարդապետութեան պէս հարց ու պատասխաններով էին տալում։ Իրանք այսպէս էին հաւատում և մեզ էլ հաղորդում իրանց հաւատի ուղեղին մասունքը...

Այս դարաւոր կապանքից մեզ ազատեցին Աղասին և Հիւսիսափայլը, որոնց դէմ երկար մաքառեցին Մխիթարեանք իրանց կուսակիցներով, բայց վերջիվերջոյ ընկճուեցին և խոնարհեցին ժամանակի անողոք պահանջի առջև։

Այսօր, մեր երջանիկ օրերում, մեր ազգն ևս ճաչակել է բարւոյ և չարի գիտութեան պտուղը, արտաքսուել է անմեղութեան և միամտութեան դրախտից, և իր ճակատի քրտինքով գիտութիւն ձեռք բերելու է դատապարտուել։ (Երանի՛ թէ այդպիսի մի դատապարտութեան արժանացած լինէր մի քանի դար առաջ...)։ Այսօր ամենայն ինչ պէտք է մկրտուի գիտութեան աւազանում, ամենայն ինչ պէտք է անցնի անաչառ կրիտիկայի բովից, որ կամ զուտի և ոսկի դառնայ, և կամ ցրի ու մոխիր դառնայ, եթէ առաջ էլ մոխիր է եղել և ծառայել է մեր

աչքին փչելու համար միայն։ Սրանով միայն կը կատարի Յիսուսի ասածը, թէ Յովհաննէսը ձեզ ջրով էր մկրտում, իսկ ես կը մկրտեմ կրակով և Հոգւով։ Անաչառ կրիտիկայի հիմնադիրը Ինքը Յիսուսն է, նա, որ խարազանը ձեռքն առած՝ մտրակում էր դպիրներին և փարիսեցիներին, քննադատելով նրանց բռնած ծուռ ճանապարհը և ցոյց տալով ուղիղը, որով պէտք է երթալ դէպի կատարեալն, ասելով՝ կատարեալ եղէք, ինչպէս ձեր Երկնաւոր Հայրը կատարեալ է։ Քաղցր է ինձ այստեղ յիշատակել սփոփուած սրտով, որ այսօր ուղիղ ճանապարհով են ընթանում մեր նորագոյն լեզուագէտները և նոյն իսկ Մխիթարեան երիտասարդ վարդապետները, որոնք սովորութիւն չունին ազգի առաջն ընկնելու, բայց յետ էլ չեն մնում։ Ուրիշ կերպ էլ այսօր անհնարին է վարել, որովհետև մեր ժամանակ գիտութեան դէմ երթալ, կատարելութեան հակառակ լինել—այդ միևնոյն է, թէ ընդդէմ խթանի աքացել։ Այսօր ոչ ոք այլ ևս հերետիկոս չի համարիւ, եթէ դարելով սրբացած մի բանի հակառակ խօսւի, միայն թէ ապացուցանէ, որ իր ասածը եթէ բացարձակ ճշմարտութիւն չէ, բայց եղածից աւելի է ճշմարիտ և օգտակար, որովհետև կատարելութեան ստորին ծայրից չեն թռչում վերին ծայրը, ուր երբէք էլ չեն հասնում. այլ դա մի ճանապարհ է, որի մի ծայրից

դէպի միւսը գնում են քայլ առ քայլ և աստիճան առ աստիճան։ Իւրաքանչիւր գիտ իր ճանապարհորդութեան պատմութիւնն ունի. օրինակ ձեզ նախագիտ փայտէ մամուլը և այսօրեան չոգեշարժ արագատիպ մեքենաները, բայց ահագին ճանապարհ կայ մէկից մինչև միւսին հասնելը։

Այսօր ես շատ լաւ գիտեմ, թէ ինչ կընշանակէ կատարեալ բառագրութիւնը, որից դէնն իմ երևակայութիւնն այլ ևս չի հասնում, բայց կարող չեմ այդպիսի մի առաջարկութիւն անել, որովհետև այդ կըլինի մի այնպիսի ոստիւն, որ նոյն իսկ մեր Վարազդատն անել կարող չէր։ Այժմ մենք կըվերականգնենք միմիայն ւիւնի և վևի ուղղագրութիւնը ըստ նախնեաց ուղղագրութեան, նրանց բռնած ճանապարհովը կերթանք, նրանց կիսատ թողածը կը շարունակենք։ Երբ որ գրում ենք „յոդւած“, այստեղ մենք միայն մի յապաւումն ենք անում, ուղղելով այդ բառը ըստ նախնի և արդի արտասանութեան—յոդ-ւած, բայց եթէ գրենք յոդված, թէպէտ ըստ արտասանութեան տարբեր չի լինիլ առաջինից, բայց այդ յապաւումն չի լինիլ, այլ գրափոխութիւն, որպիսի բան չըկայ մեր հին գրւածքում։ Մի պարզ օրինակ. ոչ ոք մեզ չի արգելում գրելու փոխանակ նորա, սորա, դորա—նրա, սրա, դրա։ Այս երկրորդ և յապաւած ձևը աւելի օրինաւոր է

աշխարհիկ լեզուում, որովհետև ունի իր ինքնուրոյն հոլովումը։ Գրոց ձևով ընդունողը պէտք է պահպանէ բոլոր հոլովները, պէտք է գործիականում չըգրէ նորանով, այլ՝ նովաւ, բացառականում չըպէտք է գրէ նորանից այլ ի նմանէ։ Հոլովական խառնուրդ չըպէտք է կազմել։ Բացի սրանից կարճը երկարից միշտ գերադասելի է, որովհետև կենդանի լեզուն միշտ կարճն է ընտրում։

Այսպէս պէտք է նայել և բայերի վրայ։ Գրաբառի ներկայի ձևը աշխարհաբառում ապառնի է, իսկ աշխարհաբառն ունի գրաբառից անկախ ներկայ։ Հաւատարիմ մնալով աշխարհաբառի քերականութեանը, չենք գրում գործեաց այլ՝ գործեց, չենք գրում գործեցից, այլ՝ կը գործեմ։ Ուզում եմ ասել այնպէս ենք գրում, ինչպէս որ գտնում ենք ասուած կենդանի լեզուում։ Եթէ գործեց և կըգործեմ կարող ենք գրել, առանց գրոց լեզուի ուղղագրութեան դէմ մեղանչելու, ինչու երբ որ գրում ենք գործուում և գործուեց—դրանով մեղանչած ենք լինում գրոց լեզուի ուղղագրութեան։ Այս ոչ տեղի տրամաբանութիւն է։ Կամ մեր լեզուի ոչ օրէնքի հիման վրայ պէտք է ասում, և՝ ուել և ոչ՝ ուել։ Գրում ենք գործում, գործեց, գործել, գործող, գործած, արդ ինչ գիր կամ յօդ որ դնենք սրանց մէկնումէկի մէջ՝ կրաւորական չինելու համար, նոյն գիրը կամ յօդը պէտք է դնել ամենայն տեղ։ Այսպէս է պահանջում լեզուի օրէնքը, որի առջև պէտք է խոնարհի ամենայն անձի քիմք և ճաշակ, ամենայն անձի յամառութիւն և կամակորութիւն։ Գրում ենք լում, պէտք է գրենք և ուել, այսպէս է պահանջում լեզուի օրէնքը։ Մի ազգ չի կարող ոչ միայն մէկի այլ նոյնիսկ հազար հոգու քըմահաճութեան ենթարկուիլ, բայց լեզուի օրէնքին ոչ ոք ընդդիմանալ կարող չէ։ Աշխարհիկ լեզուն միայն մէկ ու ունի և միայն մէկ ը և ոչ ամեն մէկից մի քանիսը։ Բայց հին գրականութիւնը մէկի տեղ մեզ տուել է երկուսը և երեքը։ Մենք պէտք է աշխատենք ազատուել քանիսից որ կարող ենք, նայած մեր բառագրութեան ներկայ հանգամանքներին։ Վաղից չենք կարող ազատուել, բայց դրան մի նոր պաշտօն չենք տալ, այլ կըպահպանենք իր նախնական սահմանում, կը գրենք միայն ոչից յետոյ և բառասկզբում, էլ ուրիշ ոչ մի տեղ։ Ի՞նչ ասել կուզի, որ բարդութիւնների մէջ վ պէտք է մնայ անփոփոխ, ինչպէս վէպ—նորավէպ, վարել, կառավարել, երիվար, օթեվան, թէև մեր նախնիք բառամէջերում գրել են անխտիր։ Կըգայ ժամանակ, որ մենք էլ կըգրենք անխտիր, վեր դուրս կըմղենք բառամէջերից և նոյն իսկ սկզբներից, բայց այդ ժամանակը դեռ հասած չէ, ներկայումս այդ անհնարին է։

Անհնարին է նրա համար, որ մեր ժողովրդի

առաջնորդողները որ և է բարեփոխութիւն անելու չափ հասունացած չեն։ Մեր ներկայ գրական լեզուն դեռ ևս մուտք չունի մեր առենական տեղերում, մեր հրապարակախօսները իրար հակառակ ուղղութիւն ունին բռնած։ Միայն „Մշակը“, իբրև ազատամիտ և յառաջադէմ լրագիր, իբրև բարեփոխութեան բարեկամ և պաշտպան՝ կարող էր իր ժողովրդականութեամբը այս խնդրին մեծ զարկ տալ և յառաջ մղել, բայց դրա խմբագիրը՝ պ. Արծրունին ուղղագրութեան խնդրում ափսոսալու չափ յետամնաց է։ Իր ընդունած ուղղագրութիւնը յառաջ մղել կարող չէ, ուրիշի մշակածն էլ երբէք չի ընդունիլ։ Նա մինչև անգամ ծիծաղում է ինձ վրայ և ասում է Աղայեանցի գլխումը մեխ է ցցուել, ոչ ոք հանել չի կարող։ Եւ ճշմարիտ է ասում։ Այդ մեխը ինքը պարոն Արծրունին է ցցել իր նորահնար և քմահաճոյ ուղղագրութեամբ, որով „թէ իրան է վնասում և թէ մեզ“։ Ապագան կը դատապարտէ պ. Արծրունուն, եթէ այժմէն իսկ, քանի ուշ չէ, քանի որ մի զօրեղ օրգան ունի ձեռին, մեր կողմը չանցնի և մեզ հետ չըմիանայ։ Զըկայ մեր մէջ ոչ մի վարժապետ, որ «Մշակի» ուղղագրութիւնը սովրեցնէ իր աշակերտին։ Զըկայ և ոչ մի դասագիրք, որ «Մշակի» ուղղագրութեանը հետևի։ Մենակ է, մենամենակ իր ուղղագրութեամբ։ Կամ այն է, որ պ.

Արծրունին արտաքոյ կարգի մի հանճար է, որ մեր խելքը չի հասնում, որ ուղղագրութեան վերաբերութեամբ նրա բռնած ընթացքն է ուղիղ՝ և կամ այնքան քիչ է հասկանում հայերէն ուղղագրութիւն, որ տարրական բաներ չըգիտէ։ Ես կարծում եմ, որ „Մշակի“ արարմունքը գիտութեան և չըգիտութեան գործ չէ, այլ մի ուրիշ հոգեկան հանգամանք կայ թաքնուած նրա սրտումը այն մեխի նման, որ ցըցած է իմ գլխումը։ բացատրենք։ Երբ որ իմ գրքերն արգելեցին, „Մշակը“ հրճւանք և ուրախութիւն յայտնեց այդ լուրն ունենալով իր ընթերցողներին, իսկ երբ որ թոյլատրութիւն եղաւ, բարձրաձայն բողոքեց, թոյլատրողներին կողմնապահ, իսկ իրան տնաչառ համարել տալով—(չեմ գրում „համարելով“, այլ „համարել տալով“) որովհետև ինքը քաջ գիտէ, որ իր բողոքը անաչառութեան արդասիք չէ։ „Մշակն“ այս չըպիտի անէր, իբրև արդարութեան պաշտպան, իբրև գաղափարի և հոգու քարոզիչ, այլ ոչ որ և է գրի, բայց պ. Արծրունին արաւ, հասկանալով որ իր արածն անվայել է «Մշակի» նշանաբանին։ Ճշմարիտ, մի՞թէ գիրն առաւել է քան հոգին, որ բովանդակւում է մի գրքի մէջ։ Մի՞թէ „Մշակի“ սխալ ուղղագրութեան համար պիտի զրկենք նրա յայտնած գեղեցիկ և օգտակար մտքերից հայ ժողովրդին։ Մէկ ինքն իրան մտածէր,

թէ եթէ „Մշակին“ արգելէին իր ուղղագրութեան համար, արգելողն էլ մի բթամիտ լինէր և այդ անէր չարամտութեամբ և չահախնդրութեամբ, ինչ կըզդար և ինչ կասէր պ. Արծրունին։ Ես չեմ ասում, որ պ. Արծրունին անպայման հաւատայ ինձ, և իր ուղղագրութիւնը թողնելով՝ նորագոյն, մշակւած ուղղագրութիւնն ընդունի, ինչպէս ընդունել են „Աղբիւրը“, „Տարազը“, „Մուրճը“ և մեր նորաւարտ լեզուագէտները—Մաղաթեան, Լիսիցեան և այլք, բայց խորհուրդ կըտայի, որ դիմէր իր ուզած լեզուագէտներից մէկն ու մէկին և ասէր.—„Պարոն պռոֆեսսոր համեմատական և արևելեան լեզուագիտութեան, ես գրում եմ—թիւ-թւի (ւ), լեզու—լեզուի (ու), յօդուած (ու), տարի տարվայ (վ), տվութիւն (վ), ասվում և վել (վ)։ Զըմռռանար իր բողոքն էլ յայտնել, թէ ես ահա քսան տարի է հայերին ասում եմ պէտք է ասել երկու տներ, երեք ոչխարներ, բայց հայերը դարձեալ չարունակում են ասել երկու տուն, երեք ոչխար“։ Ցեռոյ ինչ պատասխան որ կըլսէր, այնպէս կըվարուէր։ Ես իմ կողմից այսքան միայն կասեմ, որ պ. Արծրունին, լաւ կանէր, որ կամ հին ուղղագրութեան հետևէր կամ նոր, եթէ ոչ՝ այսօր նա հնից գՁլուխլով՝ նորին կըպչել չի ուզում և մնում է մենմենակ, և պիտի հալածւի երկու կողմից էլ, և հներից և նորերից։ Ես չեմ ուրանում պ. Արծրունու ջանքը, որ գործ է դնում լեզուի ուղղագրութեան համար, բայց այդ ջանքն ապարդիւն կանցնի, մինչև չիմանայ իր մշակած լեզուի օրէնքը և այդ օրէնքին չըհպատակի։

Ես վերջացրի, սիրելի ընկերակիցներ։ Միւս անգամ կըգրեմ եչ և է, ո և օ գրերի մասին, որոնք Ենդնքան երկար պատմութիւն ունին, ինչքան և իւնն և վեր։ Այժմ չտապում եմ, պէտք է գնամ գիւղ։ Ուրեմն ցտեսութիւն։

Ահա և միւս գրածներիս ցանկը ուղղագրութեան մասին։

ա. Մի թեթև հրահանգ մեր լեզուի ուղղագրութեան մասին. „Աղբիւր“, երկրորդ բաժին 1888 №12.

բ. Իւնը ձայնաւոր է, թէ բաղաձայն. „Աղբիւր“, երկրորդ բաժին. 1889 թ. № 5—6.

գ. Սուրբ լեզու. „Մուրճ“, 1890 № 11—12.

դ. Երկբարբառները մեր լեզուի մէջ. „Մուրճ“, № 4 1891.

ե. Մեր գրերի թիւն ինչո՞ւ է 36. „Մուրճ“, 1889 № 12

զ. Տառադարձութեան մասին. „Աղբիւր“, երկր. բաժին 1889 №

Հ.Հ.Կ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Б
7/XI 1922
Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013 1520

<< Ազգային գրադարան

NL0060088